Ռափայել Պատկանյան

Սիրո երգ

Սիրելիք, օգնություն հասե՛ք,
Նաչար գլխիս ճար տեսե՛ք,
Սրտումս է սիրո բոցը,
Շատ խոր է նորա խոցը,

Հանգցնելու հնար չի կա,
Լավցնելու ճար չի կա:

Բաղչից վարդ քաղել ուզեցի,
Փըշով ձեռքըս ծակեցի,
Անհույս սիրով վառված եմ,

Բռնավորից դաղված եմ.
Աշխարհ աչքիս սևցել է,
Հոգիս մեջը դևցել է.
Ժամ, պատարագ, սրբություն
Ինձի էլ չեն փրկություն:

Աշխարքումըս մի կին էլ
Յարիս թայը չի ծընել.
Ո՛չ Սարրա, ո՛չ Շամիրամ՝
Եկել են Զանանիս նըման.
Երկեն բոյը չինարի,

Ինքը տասնըվեց տարի.
Նախշուն աչքը ջեյրանի,
Քեզ պաչողին երանի՛.
Ո՛չ Հուդիթ և ո՛չ Եսթեր
Ունեցել են քու թուխ ունքեր,

Սիրուն, նազելի Զանան,
Աշխարքումըս աննըման:
Ո՞ր թագավոր քու սերեն
Վեր չի գալ յուր աթոռեն,
Ծընկովըդ չի փաթաթվիլ,

Քու սերը չի պաղատիլ:

Աշխարքումըս չե՛ բախտը
Նստել արքայի թաղդը.
Չեմ ուզում ես գանձ ու թագ,
Տվե՛ք անձկալվույս մենակ.

Ոտնախողիդ ես ղուրբան,
Անգին գոհար, իմ Զանան: